



Սանժօ » Ի » Է ՆՇՅ օ՞ Ի » ՆՅ » Յ  
Ս » 1/2 Է օ՞ օ՞Ս  
(Է օ՞՞ Ի Յսօ » Ս Է օ՞՞Ս » Ն-1/4 ՆՇՅ):  
օ Ի Ս » 1/2 Ի ՆՅ ՍՅ ՆՅ Շ ձօ՞՞ ՆՅ շ  
± օ՞՞՞՞՞՞՞՞՞՞  
օ Ի 1 օ՞՞՞՞՞՞ Յ ՍՅ Ն Ի Յ Յ Օ » Է Ս » ՆՇՅ:  
Կանժօ:

Օ » Յս 1 » Է ՆՅ 1/2 Ն ՆՇ. » Ի Յ Նս » Յս  
Ս » ՆՇ » Է օ՞  
(Օ » օ՞՞՞ Ի Յ Յ Յ շ Է » Է » Ի Շ Կ Կ  
Ն օ՞՞՞՞՞):  
Կ » Ս » Է Յ » Է Ի Յ, Ն Յ Ն » Ն » Յ » Յս  
Ս » Է Յ » Է օ՞,  
Է Յ օ » Է Ս շ օ՞՞՞ օ՞՞՞ » Յ Շ Ն օ՞՞՞ Ի 1  
Ն օ՞՞՞՞՞):

ԹՉ Թ օ Է Զ Ս Զ

# Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

ՈՒՐԱԹ, 8 ԱՊՐԻԼԻ 2016Թ.  
№ 10 (386)



Գորիս, 3 ապրիլի 2016թ.

## Հայրենակի ծառը մերթընդմերթ հերոսների արյամբ է ջրվում

Նորից գունատվել է ապրիլյան երկնա-  
կամարը, նորից նենգ թշնամին փորձում  
է որոշել մեր հայրենիքի նկատմամբ ունե-  
ցած սիրո աստիճանը, իսկ ինքը գորշ ճա-  
գարի պես դողում-թրթռում է, կրկին օձի  
աչքերը հառում մեր սրբատուրբ հողերին:

Հայոց դարավոր հողը՝ Արցախ-Ղարաբա-  
ղը, կրկին տնքաց ապրիլյան այդ օրը. նորից  
են փորձում խոցել-խոցոտել հողը հայկական:  
Նվիրական վայրերը կանչում են... Հայրե-  
նիքն աղմկոտ գետ է, եւ վա՛յ նրան, ով փորձի  
խել հայի ինքնությունը, փորձի խոցել լուրթ  
լեռնաշխարհի մի թիզն անգամ, հող, որին  
դարեդար խառնվել է արցունք ու արյուն, կա-  
րոտ ու սեր, երազ ու երազանք, տառապանք  
ու ցավ, անկոտորում ոգի ու որպես երդում  
հնչեցնել՝ երբե՛ք չթողնել երկիրն այդ հրաշք,  
երբե՛ք, երբե՛ք այն չտալ ոսոխին...

Ապրի՛լ, ապրի՛լ... ինչո՛ւ, ինչո՛ւ, ինչո՛ւ...  
Այսպիսի տառապանք տեսական ժամա-  
նակ չէի ապրել...  
Փորձելու եմ հրաժեշտի տողեր գրել՝ թախ-  
ծոտ, բայց ոչ լալահառաչ...

Գրիչս չի ենթարկվում, փախչում է  
«ամաչում» է գրել բոլորի մասին, երկնում է  
բարձրաձայնել, որ մահագույժը չարանենգ  
թշնամու պես նորից ծեծեց անառիկ Սյունիքի  
դարպասները, գորշ ամպերով պատեց հա-  
րազատ ոստանս՝ Սիսիան... ու... Ընկե՛լ են,  
ընկե՛լ են, ընկե՛լ են... առյուծասիրտ, քաջա-  
բազուկ սիսիանցիները, ընկել են՝ արիաբար  
հաստատելով, որ սիսիանցին անընկճելի է,  
անվեհեր, տոկուն, հաստատակամ, համառ...

Դեռ չէինք հասցրել հապարտության  
զգացումը վայելել, դրոշ դարձնել ու ծածանել  
մեր արիասիրտ կամավորների սխրանքը, մեր  
շուրթերը չէին հասցրել մրմնջալ՝ «Աստված  
ծեզ հետ, տղերք», երբ...

Բոթը՝ անամոթ, չարանենգ, անմխիթար ու

## Հայրենիքը վրանգի մեջ է. Սյունիքը ոտքի է ելնում

2016թ. ապրիլի 3-ը Սյունիքում, հիրավի,  
հայրենասիրության պոռթկումի, հավաքական  
ուժի, համախմբվածության եւ միասնության  
իսկական դրսևորման օր էր:

Ապրիլի լույս 2-ի գիշերն աղբյուրանկան  
զինուժի կողմից Լեռնային Ղարաբաղի Հան-  
րապետության սահմանի ամբողջ երկայնքով

լայնածավալ հարձակումը զայրույթի ալիք էր  
առաջացրել նաեւ Սյունիքի մարզում: Եվ հա-  
զարավոր սյունեցիներ, սրտի թելադրանքով,  
պատրաստակամություն էին հայտնել մեկնել  
ռազմաճակատ:

Ապրիլի 3-ի վաղ առավոտվանից Սյունի-  
քի մարզպետի գործարանը մատակարար վեր էր

ածվել կազմակերպական աշխատանքների  
յուրօրինակ շտաբի: Սուրեն Խաչատրյանը նա-  
խելառաջ խորհրդակցություն անցկացրեց Գո-  
րիս քաղաքի հիմնարկների եւ կազմակերպու-  
թյունների ղեկավարների հետ՝ առաջադրելով  
իրավիճակից բխող խնդիրներ:

Այնուհետեւ արվեց կարգադրություն՝ մար-  
զի բոլոր համայնքներում եւ հատկապես քա-  
ղաքապետարաններում ու մարզպետարանում  
շուրջօրյա հերթապահություն սահմանելու  
մասին:

Օրվա գլխավոր խնդիրը, սակայն, սյունի-  
քյան գումարտակի ձեւավորումն էր, որի նա-  
խապատրաստական աշխատանքները սկսել  
էին մեկ օր առաջ: Գումարտակի ձեւավորումն

էջ 3

## Նրանք նահապականեր են ու մարտիրոսներ եւ ոչ սովորական մեռյալներ ու հողեղեններ

Ո՛վ սիրելի հայրենակիցներ:

2016թ. ապրիլի 4-ին Լեռնային Ղարա-  
բաղի Հանրապետության Մարտակերտի  
շրջանում հակառակորդի հրետակոծու-  
թյան հետեւանքով զոհվեց սյունեցի ութ  
կամավորական՝ Սեդրակ Սերգեյի Ասրյան  
(Դարբաս), Սերգեյ Գուրգենի Դանյան  
(Սիսիան), Դավիթ Բագրատի Սարգսյան  
(Բալաք), Մայիս Երջանիկի Միրզոյան  
(Դարբաս համայնքի ղեկավար), Արմեն  
Մինասի Բեգլարյան (Ախլաթյան հա-  
մայնքի ղեկավար), Եղիշ Արտավազի  
Նիկայան (Լծեն), Էդուարդ Յուրիկի  
Ալեքսանյան (Սիսիան), Գագիկ Կոլյայի  
Փարսադանյան (Կապան):

Նրանք Արցախյան առաջին հերոսամար-  
տի մասնակիցներ էին, իսկ Մայիս Միրզոյանը՝  
Դարբասի գյուղապետը, 2015թ. դեկտեմբերից  
զլխավորում էր ԵԿՄ Սիսիանի մասնաճյուղը:

Սեկ օր առաջ էին անդամագրվել Սյունի-  
քում ձեւավորված կամավորական գումար-  
տակին:

Ինչպիսի՞ ոգեւորությամբ ու վճռականու-  
թյամբ էին ապրիլի 4-ին մեկնում ճակատ...

Ապրիլի 5-ին ցավազին աղետի եւս մեկ  
բոթ տարածվեց Սյունիքում. Արցախյան  
վերսկսված պատերազմի առաջնագծում զոհ-  
վել է ժամկետային զինծառայող Նարեկ Վար-  
դանի Սկրտչյանը (Գորիսի տարածաշրջանի  
Որոտան գյուղ, 1996թ. ծնված, գորակոչվել է  
բանակ 2015թ. հունվարի 22-ին):

էջ 2



Սիսիան, 6 ապրիլի 2016թ.



# Հայրենիքը վրանգի մեջ է. Սյունիքը ոտքի է ելնում

1 անմիջապես ղեկավարում էին Սուրեն Խաչատրյանը, Մեղրու, Քաջարանի, Կապանի, Գորիսի քաղաքապետներ Արշավիր Հովհաննիսյանը, Վարդան Գեւորգյանը, Աշոտ Հայրապետյանը, Վաչագան Աղունցը, ԵԿՄ տարածքային կազմակերպությունների ղեկավարներ Աշոտ Մինասյանն ու Մայիս Միրզոյանը (Սիսիան), Սուրիկ Բաղդասարյանը (Գորիս), Մանվել Օհանյանը (Կապան), Սամվել Հայրապետյանը (Մեղրի), Հովիկ Մատինյանը (Քաջարան):

Ազարակի կամավորական ջոկատը նպատակահարմար էր գտնվել թողնել տեղում՝ Նախիջևանի ուղղությամբ սահմանի պաշտպանությունն ուժեղացնելու նպատակով:

Օրվա վերջին, ըստ քաղաքապետ Մխիթար Ջաքարյանի, ազարակցի կամավորականներն արդեն իսկ գտնվում էին Ծիրանածորի եւ Գողթանասարի սահմանային ուղեկալներում:

Ժամը 16-ի սահմաններում Մեղրու, Քաջարանի, Կապանի, Սիսիանի, Գորիսի ջոկատներն արդեն իսկ

Գորիսի Գրիգոր Տաթևացու անվան հրապարակում էին:

Կամավորականների մարզային հավաքակալայնի վերածված այդ հրապարակում էին նաև երիտասարդ երկրապահները (հրամանատար՝ Ջարգանդ Նիկողոսյան): Կամավորականները զինվորական հանդերձանք եւ զենք էին ստանում Գորիսի ու Սիսիանի զորամասերից:

Սիսիանի կամավորականները, մինչև Գորիս մեկնելը, այցելել են Սիսիանի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, որտեղ Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ տեր Մակար վարդապետ Հակոբյանի օրհնությամբ տեղի ունեցավ օրհնության կարգ, որից հետո կամավորականները զոհված ազատամարտիկների պանթեոնում խոնարհվեցին իրենց զոհված ընկերների շիրիմներին: Կամավորականներին ճակատ էին ծանապարհում բազում սիսիանցիներ՝ քաղաքապետ Աղասի Հակոբջանյանի զխա-վորությամբ:

Կապանում նույնպես կազմա-

կերպվել էր ճակատ մեկնող կամավորականներին ծանապարհելու արարողություն: ԵԿՄ տարածքային կազմակերպության գրասենյակի բակում հավաքված երկրապահներին ողջերթի խոսք էր ուղղել Կապանի զինկոմ, փոխգնդապետ Լեոնիդ Գրիգորյանը:

Ժամը 19-ի դրությամբ Գորիսում ավարտվել էր գումարտակի ձևավորման աշխատանքը. գումարտակի հրամանատարի պարտականությունը դրվել էր Գորիսի զինվորական կոմիսար, գնդապետ Սելիքսեթ Պողոսյանի վրա:

250 հոգուց բաղկացած կամավորական գումարտակի առջեւ ելույթ է ունեցել Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը:

Ժամը 19:30-ին Գորիսի Գրիգոր Տաթևացու անվան հրապարակից ավտոբուսների շարասյունը, զխա-վորությամբ Սյունիքի մարզպետի, շարժվեց դեպի Լեռնայի Ղարաբաղի Հանրապետություն: Շարասյան կազմում էին նաև Գորիսի հիվանդանոցի շտապօգնության մեքենաները՝ համապատասխան բուժանձ-



## ԼԱՐԻՍԱ ԳԱԼՍՏՅԱՆ. «Մեկնում եմ ռազմաճակատ՝ ավարտին հասցնելու ամուսնուս կիսաթողած գործը»

Լուսանկարում պատկերված կինը Լարիսա Գալստյանն է՝ Արցախյան ազատամարտի կորնիժորի մասնակից Կամո Գալստյանի կինը: Կամոն, ավաղ, տարիներ առաջ ողբերգական վախճան ունեցավ, բայց նրա մասին հիշողությունն ապրում է

համազուգուցիցների ու մարտական ընկերների սրտերում:

Ապրիլի 3-ի առավոտյան տիկին Լարիսան Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի գործիսյան աշխատասենյակում էր. խնդրում էր իրեն նույնպես ընդգրկել կազմավորվող եւ ռազմաճակատ մեկնող գումարտակում: Նա պատրաստակամություն հայտնեց եւ բուժքույր լինել, եւ շարքային զինվոր լինել: Մարզպետը հորդորում էր նրան՝ հետ կանգնել այդ մտադրությունից, քանի որ ճակատում կռվելը նախեստառաջ տղամարդկանց գործն է: Սակայն Լարիսան համառեց, իսկ Սուրեն Խաչատրյանը, ի վերջո, ընդառաջեց:

Լարիսա Գալստյանն ապրիլի 3-ին Սյունիքի գումարտակի կազմում մեկնեց ռազմաճակատ...

**ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**  
3 ապրիլի 2016թ.



Սյունիքի կամավորականներին Ստեփանակերպում դիմավորեց ԼՂՀ վարչապետ Արայիկ Հարությունյանը

մարտակն արդեն Ստեփանակերպում էր եւ պատրաստ էր մեկնելու առաջնագիծ:

Ապրիլի 3-ի օրը, սակայն, չնշանավորվեց միայն դրանով: Գումարտակի կազմավորմանը զուգահեռ ձեւավորվեց նաև ռեզերվ, որն անհրաժեշտության դեպքում կփոխարինի ճակատ մեկնածներին կամ կհամարվի գումարտակի շարքերը: Ինչպես տեղեկացրին մարզի զինկոմիսարիատներից՝ շարունակվում է

ճակատ մեկնել կամեցողների հաշվառումը:

Օրվա ընթացքում «Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ-ում տեղի էր ունենում դոնորական արյունատվություն: Ըստ ՓԲ ընկերության տնօրեն Արթուր Առաքելյանի՝ դոնորական արյան հավաքումը կշարունակվի նաև ապրիլի 4-ին ու 5-ին:

**ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**  
3 ապրիլի 2016թ.



նակազմով եւ դեղորայքով, ինչպես եւ ամենազնազ մեքենաներ՝ մոբիլիզացված Գորիսի տարածաշրջանից:

Թեև Գորիսում առատ ձյուն էր տեղում, բայց հարյուրավոր մարդիկ հավաքվել էին հրապարակում: Նրանց ծափահարությունների ներքո էլ ավտոշարասյունը շարժվեց դեպի Արցախ:

Տեսարանը, իրոք, հուզիչ էր: Գումարտակում, իհարկե, կային նաև երիտասարդներ, բայց հիմնական կազմն Արցախյան գոյամարտի վետերաններ էին՝ 1990-ականներից մեզ ծանոթ դեմքեր: Ամենակարեւորը՝ նրանք ճակատ էին մեկնում ոգեւորված, բարձր տրամադրությամբ, սահմանում կանգնած երիտասարդ զինծառայողներին մեցուկ լինելու վճռականությամբ, արդրեջանական ելուզակներին նույնիսկ կյանքի զնով սանձելու պատրաստակամությամբ:

Օրվա վերջին՝ ժամը 22-ի սահմաններում, Սյունիքի գու-



# Հաղթանակի ծառը մերթընդմերթ հերոսների արյամբ է ջրվում



ԷԿԵԼԻՆԱ ԹԱԳԵՎՈՍՅԱՆ

Եղ 1 անդարձանելի, սեւ եւ անթափանց շղարշով պատեց, արցունքախեղդ արեց Սիսիանն ու Սյունիքը, Արցախն ու Հայաստանը...

Եկավ գույժը՝ (ա՛խ, ինչ հեշտ է գալիս այդ անաստվածը), չարախիճը, լարծուն, հեռուն դեմքով ու... 7 ցավ, 7 վիշտ, 7 ցահատակ...

Հետո... տղերքը եկան... եկան, չէ, տղերքին, ավա՛ղ, բերեցին... Տղե՛րքը... ինչ քաջ, անվեհեր, սրտոտ, արիասիրտ են տղերքը...

Հպարտությունը փորձեց սաստել աչքերին անկյուններում «հերթապահող թշնամուն» արցունքս, ու ստիպել զգոնման, սթափվել, քանզի քաջերն արցունքի կարիք չունեն:

Անձրեւ-արտասուքը չի ուզում լքել ինձ... Շատ են ուզում, որ պարզեն աչքերս, որ մեծագույն սիրով, անկասկածով, պատկառանքով գրեն սիսական արծիվների անունները՝ Սեդրակ Սերգեյի Ասրյան (Դարբաս), Սերգեյ Գուրգենի Դանդյան (Սիսիան), Դավիթ Բագրատի Սարգսյան (Բալաթ), Մայիս Երջանիկի Սիրոզյան (Դարբաս համայնքի ղեկավար), Արմեն Մինասի Բեգլարյան (Ախլաթյան համայնքի ղեկավար), Եղիշ Արտավազի Նիկայան (Լծեն), Էդուարդ Յուրիկի Ալեքսանյան (Սիսիան):

Արիացի, սիրտ իմ, փառավորվիր, հոգի, մի տրտնջա, գրիչ, քանզի գովերգելու են փառքը նվիրյալների, գովերգելու են հավատով տոկուն, հիացունով լուսավոր, հպարտությամբ աներան...

Տղե՛րքը... ճանապարհեց սիսիանցին իր արծիվներից, ճանապարհեց ոգելից աչքերով, ճանապարհեց, որ... հպարտանա՛ր...

Ավա՛ղ, փորձությունների շղթան ծայր չունի...

Աչքիս առջեւից չեն հեռանում ձեր մարտական դեմքերը, մեր անխոցելի հերոսներ, մեր քաջագուն, անընկճելի, հաղթաբազուկ, կորովի, գորեղ, անպարտելի եղբայրներ...

Չեն հիշում՝ ո՞րերորդ անգամ դիտեցի ձեր՝ մարտադաշտ գնալուց առաջ անմահացած կադրերը, ուր ժպտում էիք հպարտախառն ժպիտով, աներկյուղ հայացքով...

Ինչո՞ւ չանասցիք մեր աղոթք-մրմունջները, մե՛ր աղերսը՝ գնալ, բայց վերադառնալ անփոր-

ձանք ու անվճառ... Ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչո՞ւ... Երանի՛ նրան, ով մայրական կաթի հետ հայրենասիրության անսպառ պաշարներ է կուտակում, երանի՛ նրան, ում ուղին հաստատուն է, անշեղ, անսասան, նաեւ՝ փառավոր՝ դեպի հայրենիք տանող ճանապարհին:

Գնացիք՝ պատերազմելու խավար պարտադրող դավադիր թշնամու դեմ՝ արիամարիելով նրա դավերը...

Գնացիք՝ կիսատ թողած գործը ավարտին հասցնելու հաստատակամությամբ, գնացիք արիանալու, հերոսանալու, ցավոք, մարտիրոսվելու...

Ի՞նչ զարմանալի ուժ կարող է խորտակել հայի սերն առ հայրենիք...

Ինչպիսի՛ անխառն ոգեւորությամբ, հիացքով, գիտակից հպարտությամբ էիք շարվել Սիսիանի ԵԿՄ-ի բակում...

Ինչքա՛ն խոսուն հայրենասիրություն էր ճառագում յուրաքանչյուրիդ հոգուց, աչքերից, կեցվածքից...

Մենք ճանապարհում էինք ձեզ՝ տոգորելով մեր հոգու լույսով, դույզն իսկ չպատկերացնելով, որ ճանապարհում ենք դեպ հավերժություն...

Ափսո՛ս, հազա՛ր ափսոս, մեր անմեղ մահատակներ... Նահատակներ՝ ո՛չ, հե-րոս-ներ, ո՛չ, ար-ծիվ-ներ, որոնց ճախրանքն ահ ու սարսափ էր տարածում երկչոտներին, նրանց՝ այդ ճիվաղներին՝ միայն թիկունքից հարվածելու «արվեստին» տիրապետող սողուններին...

Լալագին ու լալահառաջ ողբերը չեն որոշում հայրենիքի բախտը, եւ ոչ էլ քաղաքակրթությունից հեռու, արյունոտ խորհրդանշաններն ու սեւ օրդուները, որոնք «կոփված» են միայն նախճիղով ու եղեռնով, ի գորու չեն կտրել հայ ժողովրդի ազատատենչ ու վեհանձն ոգին:

Ներեցե՛ք ինձ, իմ ծանոթ-անծանոթ եղբայրներ, որ կարողացա միայն գրչով անմահացնել ձեր անունը, մերձավորներին սփռվել ցավով, բայցե հպարտությամբ լեցուն տողերով՝ փոքր-ինչ թեթեւացնելով նրանց անամոք վիշտը...

Երբ անեն անգամ բացվի ապրիլը, մենք ձեզ կհիշենք մեր մտքի ու հոգու, մեր խոսքի ու ձայնի, մեր ժպիտի ու արցունքի մեջ, կհիշենք ու կասենք՝ ափսո՛ս, հազա՛ր ափսոս տղերքը...

Հանգչե՛ք խաղաղությամբ, իմ եղբայրներ, մայր հողն իր գիրկը կընդունի հպարտ ու անպարտ հերոս զավակներին, կընդունի ցավով, բայց հպարտությամբ...

Չ.Գ. Վաղն առավոտյան ես կրկին մտնելու եմ դասարան, «բարի լույս» եմ մաղթելու աշակերտներին ու վարելու եմ, թերեւս, կյանքիս ամենակարեւոր դասը... Այնտեղ, որտեղ չի կարողացել հաղթել հայ ժողովուրդը, հաղթել է գրով, հաղթել է գրչով՝ ծաղրելով ու ոչնչացնելով իր ոտխներին, իսկ գալիք սերունդներին փոխանցել է կամք, երազ,



Սիսիան

հուր ու հավատ... Հետո գրկելու եմ իմ շատ սիրելի աշակերտին՝ Դավիթ Ազոյանին, ու խնդրելու եմ, որ չվիատվի, որ պարծենա բոլոր-բոլոր հայ հերոսներով,

որ հպարտանա ազատամարտիկ հորով՝ Գեւորգ Ազոյանով, ով անպայման ապաքինվելու է Դարաբաղում ստացած վերքերից, հետո ամուր-ամուր գրկելու է իր Դավ-

թին ու ասելու է ամենակարեւորը՝ Ազոյանները չեն հանձնվում... Եվ ոչ միայն: 6 ապրիլի 2016Թ.

## ԱՐՇԱԿԻՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. «Մեղրեցի կամավորականները, հրաման լինելու դեպքում, պատրաստ են Պաշտպանության բանակի զորամասերի կազմում առաջ գնալ»



«Սյունյաց երկիր» թերթը շարունակում է շուրջօրյա կապը Սյունիքի մարզից ռազմաճակատ մեկնած կամավորական ջոկատների հետ:

Ապրիլի 7-ի վաղ առավոտյան հեռախոսազրույց ունեցանք Մեղրու ինքնապաշտպանական ջոկատի հրամանատար, Մեղրու քաղաքապետ Արշակիր Հովհաննիսյանի հետ: – Պարոն Հովհաննիսյան, ներկայումս որտե՞ղ է գտնվում Մեղրու ջոկատը: – Եղնիկներում ենք՝ Գորիսի ջոկատի հետ միասին, անմիջապես դիրքերում ենք՝ ԼՂՀ Պաշտպանության բանակի զինվորների հետ: – Ինչպե՞ս եք գնահատում օպերատիվ իրավիճակը սահմանագծի այդ հատվածում: – Համեմատաբար հանգիստ է: – Ջոկատի տրամադրությունն ենք ուզում իմանալ:

## Մարդասիրական օգնություն՝ սահմանին կանգնած հայորդիներին

ԼՂՀ տարածքում ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը սկսված ռազմական գործողությունները ուղքի են հանել ողջ հայությանը: Սահմանին կանգնած զինվորներին եւ շփման գիծ մեկնած կամավորականներին իրենց օգնությունն են ցուցաբերում ոչ միայն տարբեր կազմակերպություններ, այլև անհատ քաղաքացիներ: Մարզի համայնքների, կազմակերպությունների եւ քաղաքացիների նախաձեռնությանն ընդառաջե-

լով՝ մարզպետ Սուրեն Խաչատրյանի կարգադրությամբ զինվորներին, կամավորներին եւ ԼՂՀ բնակչությանը մարդասիրական օգնություն ցուցաբերելու նպատակով ստեղծվել է համեմատաբար մարզպետի օգնական Վիկտորյա Դավթյանի նախագահությամբ, կազմակերպում եւ ապահովում է մարդասիրական օգնության առաքումը ԼՂՀ: Վիկտորյա Դավթյանը նշեց, որ մարզի համայնքապետարաններում կենտրոնացվում եւ տեսակավորվում են հավաքված առաջին բուժօգնության, անհրաժեշտ հիգիենայի պարագաներն ու չոր սնունդը եւ ուղարկվում Ստեփանակերտ, որտեղից էլ՝ սահման: Քաղաքապետարաններում ստեղծված համեմատաբար կազմակերպված բնակչության տրամադրած օգնությունը,

– Տրամադրությունը մարտական է, հրաման լինելու դեպքում, պատրաստ ենք Պաշտպանության բանակի զորամասերի կազմում առաջ գնալ: – Ի՞նչ կցանկանաք փոխանցել սյունեցիներին եւ հատկապես մեղրեցիներին: – Միայն ու միայն շնորհակալություն եւ երախտագիտություն՝ նման ուշադրության եւ հոգատարության համար: Օրական մի քանի անգամ Մեղրուց հեռախոսազանգ ենք ստանում, ոգու իսկական պոռթկում է այնտեղ, բազմաթիվ մեղրեցիներ ցանկանում են գալ ու միանալ մեզ: Հավատացե՛ք, առաջնագծում, դիրքերում գտնվողի համար շատ կարեւոր է թիկունքի վերաբերմունքը: Հենց թիկունքի շնորհիվ է, որ այստեղ ոչ մի բանի կարիք չենք զգում: Այդ վերաբերմունքը մեզ վրա հավելյալ պարտականություն է դնում՝ մինչեւ վերջ ու պատվով կատարել առաջադրանքը: – Ջրե՞ր հաջողություններ: – Արե՛ւ ԼՂՀ-ում ՍԱՄԿԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ 7 ապրիլի 2016Թ.

արդեն բավականին շատ ծանրոցներ են ուղարկել ԼՂՀ եւ սահման, ու դեռ շարունակում են իրականացնել այդ նախաձեռնությունը: Ի դեպ, քաղաքապետարաններում համակարգվում է ոչ միայն քաղաքային ենթակայության կառույցներից, անհատներից, այլև կրթօջախներից եւ տվյալ տարածաշրջանի գյուղական համայնքներից տրամադրվող օգնությունը: Ծանրոցներում հատկապես դպրոցականները չեն մոռանում դնել նամակներ եւ բարեմաղթանքներ: «Ես սիրում եմ քեզ, իմ զինվոր», «Սիրով ու կարոտով՝ հայ զինվորին» եւ այլ գրառումներով ծանրոցները եւս մեկ անգամ ապացուցում են, որ սահմանին կանգնած հայորդու թիկունքն ամուր է: ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



3 ապրիլի 2016թ., Գորիս, մի խումբ կամավորականներ՝ ճակատ մեկնելուց առաջ: Կենտրոնում՝ Գարբասի գյուղապետ Մայիս Միրզոյանն է:

# Միսական գունդը միշտ մարտունակ է...

Ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերն Ադրբեջանն անսպասելի հարձակում է գործել ԼՂՀ-ի ամբողջ սահմանի երկայնքով՝ օգտագործելով տարբեր տեսակի զինտեխնիկա: Առավոտյան արդեն ողջ Հայաստանի Հանրապետությունը տեղեկացավ այդ սարսափելի այդ լուրի մասին:

Վերջացել է: Ապրիլի 3-ին մեկնեցին Դարբասը՝ իրենց ու իրենց մարտական ընկերների չավարտած կռվին վերջակետ դնելու: Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահի օրինությունը ստանալուց եւ մարտական ընկերների շիրմերին այցելելուց հետո գնացին մեր արծիվները: Դեռ 90-ականներին նրանք էլ 18-20 տարեկան երիտասարդներ էին, իսկ հիմա նայելով նրանց, տեսնում ենք մարտիկներին՝ ավելի կոփված, արիացած ու ամենակարեւորը՝ մարտական ոգով լցված:

սահմաններում կանգնած մեր հերոսների համար: Ապրիլի 4-ին ցավալի լուրեր ստացանք: Միսական գնդի մարտիկներից ունեցանք զոհեր: Ունենք նաեւ վիրավորներ, որոնք, վատահ եմ, ապաքինվելու են պետք է պետք է լինի, նորից կմեկնեն առաջին գիծ: Միջազգային հանրությունը կոչեր է անում Ադրբեջանին՝ դադարեցնել կրակը, հարցը լուծել խաղաղ ճանապարհով: Բայց միայն կոչեր անելով հարցը չի լուծվի: Այնքան երբեք խաղաղության ջատագով չի եղել, նա՛ ինչպես հիվանդ հայրը, ծարավ են արյան, ամենը մարդկանց արյան, հայի արյան: Բայց մենք ունենք ամուր արմատներ, ամուր կանգնած ենք մեր հողի վրա ու չենք պատրաստվում զիջել, եթե պատերազմում ենք, պատերազմում ենք մինչեւ վերջ, մինչեւ վերջին ադրբեջանցուն դուրս չչարտենք մեր երկրից, ինչպես արել են մեր պապերը, ինչը են անում են հիմա՝ մարտի դաշտում գտնվողները:

ԱՆՆԱ ՌՈՒԲԵՆՅԱՆ

# Միշտ պատրաստ էր հայրենիքը պաշտպանելու

Ապրիլի 6-ին կապանցիները վերջին հրաժեշտը տվեցին Գագիկ Փարսադանյանին, ով զոհվեց ապրիլի 4-ին: Նախորդ օրը Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում հոգեհանգստյան արարողություն կատարվեց՝ ի հիշատակ նահատակ զինվորի: Երբ ապրիլի լույս 2-ի գիշերն Ադրբեջանը հարձակվեց Լեռնային Դարբասի վրա, հաջորդ օրը նա Կապանի երկրապահների խմբի հետ մեկնեց Արցախ: Միսականի երկրապահների հետ Մարտակերտի շրջանով առաջնագիծ էր գնում, երբ թշնամու անօդաչու թռչող սարքը խոցեց տղաներին...



Նրա մարտական ընկերները հավաքվել էին երկրապահ կամավորների միության Կապանի տարածքային բաժանմունքի գրասենյակում: Բոլորի դեմքին ափսոսանք եւ խորին վիշտ կար: Գագիկին բնորոշում էին որպես մարդամոտ, ընկերասեր, կարգապահ մարտիկ: - Բավական է հիշել, թե ինչպես էր նա պաշտպանում Դարբասի մաս-Փայլասար սահմանը, - պատմում էին նրա զինակիցները, - Շիկահողի գումարտակի հրամանատարությունը բարձր է գնահատել նրա ռազմական ունակությունները՝ ճշանակելով դասակի հրամանատար, այնուհետեւ տեղափոխվել է 5-րդ գումարտակ՝ Մաշտոցի վայրում: Պատահական չէ, որ նա մահացավ զենքը ձեռքին: Նրա մարտական ընկերը, նաեւ համագյուղացին՝ Կապանի զինվորի տեղակալ, մայր Գարիկ Ներսիսյանը, Գագիկին բնորոշեց որպես կատարողական ու անմիջական: Նա հուզված էր մարտական ընկերոջ կրտսերի, մանավանդ ինքն էր ջերմ ձեռքսեղմումով Գագիկին Արցախ ճանապարհել:

եր, պաշտպանում էր Կապանի շրջանի սահմանները: Երբ 1992-ին Կապանի սահմանամերձ գյուղերը եւ քաղաքը հրետակոծվում էին, կամավոր անդամագրվել է Կապանի զորամասին, այնուհետեւ տեղափոխվել 84029 զորամասի 3-րդ գումարտակ: 1993-ի հունիսին ծառայությունը շարունակել է 84029 զորամասի 5-րդ գումարտակում՝ որպես դասակի հրամանատար եւ ծառայել մինչեւ 1996 թվականի մայիսի 10-ը: Մասնակցել է Կապան քաղաքի եւ սահմանամերձ գյուղերի պաշտպանությանը եւ մարտական գործողություններին: Իսկ երբ 1992-ի աշնան Արցախյան պատերազմը նոր ընդգրկումներ ունեցավ, մասնակցեց Լաչինի մարտերին՝ Արցախի Պարսադանյան կապող միջանցքի բացմանը: 1992-ի դեկտեմբերի 10-ին Կապանի ինքնապաշտպանական ուժերը լայնածավալ գործկազմակերպեցին ազատագրելու այն բարձունքները, որտեղից հակառակորդը հեռահար հրետանու միջոցով մահ ու ավերածություններ էր սփռում Կապանի եւ սահմանամերձ գյուղերի վրա: Վճռական այդ պահին ակտիվ մասնակցություն ունեցավ Գագիկ Փարսադանյանը: 1993-ին մասնակցել է Շիկահող, Սրաշեն եւ Ներքին Հանդ գյուղերի պաշտպանությանը եւ վիրավորվել: 1994-ի հունվարի սկզբին, երբ թշնամին վերջին ուժերը հավաքեց տիրանալու կորցրածին, Գագիկ Փարսադանյանը հունվարի 5-ին զորամասի կազմում տեղափոխվեց ԼՂՀ հարավարեւելյան ճակատ՝ մասնակցելու Հրապարակի կապակայանի համար մղվող մարտերին, իսկ 1994-ի ապրիլի 24-ին վիրավորվել է Մարջանի գյուղի մերձակայքում: Սգո հավաքից հետո մեքենաների շարասյունը շարժվեց դեպի Բաղաբուրջի հուշահամալիր, որտեղ դամբանական խոսքով հանդես եկան Կապանի զինվոր, փոխգնդապետ Լեոնիդ Գրիգորյանը, Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը, այնուհետեւ նահատակ ռազմիկի դին զինվորական պատվմեքերով իջեցվեց գերեզման:

Երկրապահ կամավորների միության Կապանի տարածքային բաժանմունքի գրասենյակի մոտ տեղի ունեցավ սգո հանդիսակարգ, Գագիկ Փարսադանյանի մարտական ուղին ներկայացրեց 97-րդ բրիգադի 6-րդ մոտոհրաձգային գումարտակի շտաբի նախակին պետ Սպարտակ Ստեփանյանը, հիշատակի խոսք ասաց մարզպետարանի գործադիր տնօրենի պետ Արսեն Գրիգորյանը: Մասնավորապես այն միտքը հայտնվեց, որ միայն զինադադարի ժամանակ էր Գագիկը զենքը վայր դրել, նրա մարդկային տեսակն այնպիսին էր, որ հակառակորդի յուրաքանչյուր ոտնձգության դեպքում միշտ պատրաստ էր զենք վերցնել, թեպետ Արցախյան պատերազմում երկու անգամ վիրավորվելը շատ բան էր խլել նրա առողջությունից: Մանավանդ պատրաստ էր կանգնել մարտական դիրքերում թշնամու դեմ հանդիման կանգնած 18-20 տարեկան երիտասարդների կողքին: Նրա գործը եղել է հայրենիքի պաշտպանությունը, ինչին հավատարիմ եղավ մինչեւ վերջ: Գագիկ Կոլյայի Փարսադանյանը (ծնված 1960 թվականին) 1975-ին ավարտել է Հունան Ավետիսյանի անվան դպրոցի 8-րդ դասարանը, այնուհետեւ մասնագիտություն ստացել Կապանի N21 պրոֆտեխնուսումնարանում: Ծառայել է Խորհրդային Միության զինված ուժերում: Հայ-ադրբեջանական հակամարտության առաջին օրերից նա երկրապահների ջոկատի կազմում

# Եվս մեկ զոհ, չորս վիրավոր

Դարբասը-ադրբեջանական շփման գծում թեւ կրակը դադարեցնելու համաձայնություն է ձեռք բերվել, բայց իրադրությունը մնում է լարված, եւ առաջնագծից մահվան գույժ է ստացվում:

Ապրիլի 6-ին ժամը 20-ին Կապանի զինվորի սարիսարիստուն լուր է ստացվել, որ մարտական առաջադրանք կատարելիս զոհվել է պահեստի ավագ լեյտենանտ Արմեն Գասպարյանը (շատերը նրան ճանաչում են Մակիչ անունով): Ծնվել է 1974թ. փետրվարի 3-ին Գորիսի շրջանի Շինուհայր գյուղում, որտեղ ութամյա կրթություն ստանալուց հետո ավարտել է Կապանի շինարարական տեխնիկումը: Դեռեւս պատանի մասնակցել է Կապանի սահմանամերձ բնակավայրերի պաշտպանությանը: 1991-92թթ. մասնակցություն է ունեցել Լեռնային Դարբասի Մարտակեր-

տի շրջանի սահմանամերձ գյուղերի ազատագրման մարտական գործողություններին: 1992թ. մարտի 5-ին Մարտակերտի շրջանի Ջանյաթաղ եւ Կիչան գյուղերի համար մղվող մարտերի ժամանակ վիրավորվել է: 1992-ի ապրիլի 26-ին մասնակցել է Ջանգեղանի շրջանի Դազանչի եւ Աղբենդ գյուղերի հենակետերի ոչնչացման գործողություններին: 1993-ի ապրիլի 20-ին զորակոչվել է ազգային բանակ եւ մինչեւ 1994թ. դեկտեմբերի 10-ը ծառայել Կապանի 83117 զորամասում (Շահունյանի գունդ): 1994թ. հունվարին զորամասի ստորաբաժանման կազմում տեղափոխվել է հարավարեւելյան ճակատի Մարջանի գյուղի հակաօդային պաշտպանության հենակետերը, մասնակցել պաշտպանական եւ մարտական գործողություններին: 1995-1999թթ. զբաղվել է մեքենատեսությամբ, 1999-ին պայմանագրային ծառայության է անցել ԳՀ զինված ուժերում մինչեւ 2008 թվականը: 2010-ից աշխատում էր «Ջանգեղուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ում: Ամուսնացած է, ունի երկու զավակ: Արմեն Գասպարյանը ԼՂՀ նախագահի կողմից պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով, «Վազգեն Սարգսյան» մեդալով, «1992-94թթ. Արցախյան պատերազմի մասնակից» կրծքանշանով: 2008-2012թթ. եղել է Կապանի ավագանու անդամ: Արմեն Գասպարյանը



Արմեն Գասպարյանը (շատերը նրան ճանաչում են Մակիչ անունով)

հարգված էր մարտական ընկերների կողմից: Ապրիլյան այս օրերին առաջիններից մեկը պատրաստակամություն հայտնեց լինել կրվող տղաների կողքին: Ինչպես փոխանցեց Կապանի զինվոր, փոխգնդապետ Լեոնիդ Գրիգորյանը, նույն մարտական առաջադրանքի ժամանակ վիրավորվել է չորս կապանցի երկրապահ, որոնցից մեկը՝ թեթեւ հրազենային վնասվածքով, իսկ երեքը վիրահատվել են: ԱՎՐԱՍ ՕՐԲԵՆՅԱՆ

Արցախյան պատերազմի օրերին Գագիկ Փարսադանյանը սրտի անհուն ցավով էր հրաժեշտ տալիս հավերժ ճամփորդ դարձած ընկերներին: Ծակատագրի դառն հեզմանքով նա էլ իր վերջին հանգրվանը գտավ Բաղաբուրջի հուշահամալիրում՝ մարտական ընկերների կողքին: Ցավով, նրա երկու որդին եւ երկու դուստրը հոր կարոտը լուսանկարներից են առնելու: ԱՎՐԱՍ ՕՐԲԵՆՅԱՆ

# Ինչպես վերականգնել ռազմական գործողություններն Արցախում

Քառօրյա պատերազմի քրոնիկոն. ապրիլ 2016թ.



■ (02/04/16 [08:18])  
 Ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը շփման գծի հարավային, հարավարևելյան և հյուսիսարևելյան ուղղություններով հակառակորդը ձեռնարկել է բացահայտ հարձակողական գործողություններ՝ այլ զինատեսակների հետ միասին օգտագործելով հրետանի, զրահատեխնիկա և օդուժ:

Բացի առաջնագծում ընթացող մարտերից, հակառակորդը հրետանային հարվածներ է հասցրել խաղաղ բնակավայրերի և մի շարք գործարարական մշտական տեղակայման վայրերին:

Այս պահի դրությամբ զարաբաղա-ադրբեջանական հակամարտ գործերի շփման գծի ողջ երկարությամբ տեղի են ունենում թե՛ բախումներ:

ՊԲ առաջապահ ստորաբաժանումները, ընդունելով հակառակորդի մարտահրավերը, վարում են հուսալի պաշտպանական մարտեր:

■ (02/04/16 [09:10])  
 Ղարաբաղ-ադրբեջանական հակամարտ գործերի շփման գծում ադրբեջանական զինուժը շարունակում է իրականացնել լայնամասշտաբ նախահարձակ գործողություններ:

Այս պահի դրությամբ ՊԲ առաջապահ ստորաբաժանումները պաշտպանական հաջող մարտեր են իրականացնում առաջնային գծի բոլոր ուղղություններով հակառակորդին պատճառելով կենդանի ուժի և զինտեխնիկայի զգալի կորուստներ: ՊԲ օպերատիվ տվյալների համաձայն, բացի ադրբեջանական զինուժին հասցրած այլ կորուստներից, ՊԲ հակաօդայինները հակամարտ գործերի շփման գոտու հյուսիսային հատվածում խոցել են հայկական դիրքերի ուղղությամբ գրոհող թշնամական մեկ ուղղաթիռ:

■ (02/04/16 [10:25])  
 Ըստ ՊԲ օպերատիվ տվյալների՝ ադրբեջանական զինուժի կողմից ապրիլի 2-ին ժամը 08:30-ի սահմաններում Մարտունու պաշտպանական ուղղությամբ ՄՄ-21 («Գրադ») կայանքից իրականացված հրթիռահրետակոծության հետևանքով սպանվել է 2004թ. ծնված Վաղինակ Թաթուրի Գրիգորյանը, ես երկու երեխա վիրավորվել են:

■ (02/04/16 [12:50])  
 Ղարաբաղ-ադրբեջանական հակամարտ գործերի շփման

գծի ողջ երկայնքով շարունակվում են ռազմական բախումները: Առավել թե՛ մարտեր են ընթանում արդեն ռազմաճակատի վերածված առաջնային գծի հարավային (Յաղուր) և հյուսիսարևելյան (Մարտակերտ) ուղղություններով: Հաստատված տվյալներով զարաբաղյան ուժերը մարտագծի հարավարևելյան ճակատում շարքից հանել են 2 տանկ, հյուսիսարևելյան ուղղությամբ՝ 1 տանկ և 1 անօդաչու թռչող սարք:

Ժամը 12:30-ի սահմաններում ՊԲ հակաօդայինների կողմից հարավարևելյան ուղղությամբ խոցվել է թշնամու ես մեկ ռազմական ուղղաթիռ, իսկ հյուսիսարևելյան ուղղությամբ՝ 1 անօդաչու սարք:

■ (02/04/16 [18:50])  
 ՊԲ առաջապահ ստորաբաժանումները շարունակում են հաջողությամբ վարել պաշտպանական մարտեր և հակառակորդին հասցնել ծանր վնասներ: Ընդհանուր առմամբ, ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը և օրվա ընթացքում տեղի ունեցած մարտական գործողությունների ընթացքում ադրբեջանական զինուժը սովել է 200-ից ավելի կորուստ: Միայն Թալիշի ուղղությամբ ոչնչացվել է ադրբեջանական հատուկ նշանակության ջոկատի 30 զինվոր, Մարտակերտի ուղղությամբ՝ 2 տանկ, 2 անօդաչու թռչող սարք, իսկ հյուսիսային ուղղությամբ՝ 1 ուղղաթիռ: Առավել խոշոր բախումներ են տեղի ունենում մարտագծի հարավարևելյան ուղղությամբ: Հակառակորդը կիրառելով զրահատեխնիկա, հրետանային միջոցներ, այդ թվում՝ ՄՄ-21 («Գրադ») տիպի կայանք, հարձակման թիրախ է դարձրել ոչ միայն պաշտպանության բանակի դիրքերը, այլև՝ խորը թիկունքում գտնվող խաղաղ բնակավայրերը: Այս ուղղությամբ ՊԲ հակաօդայինների կողմից ժամը 12:30-ի սահմաններում խոցվել է թշնամական մեկ ռազմական ուղղաթիռ և 2 տանկ:

Ցավոք, թե՛ մարտերի ընթացքում կորուստներ է ունեցել նաև զարաբաղյան կողմը:

■ (03/04/16 [07:25])  
 Ապրիլի 3-ին՝ ժամը 06:00-ից սկսած, առաջնային գծի հարավային ուղղությամբ հակառակորդը հրթիռահրետանային միջոցների և զրահատեխնիկայի կիրառմամբ շարունակել է ագրեսիվ ռազմական գործողությունների վարումը:

ՊԲ առաջապահ ստորաբաժանումները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցառումներ հակառակորդի նախահարձակ գործողությունները ճնշելու համար:

■ (03/04/16 [11:35])  
 Ղարաբաղ-ադրբեջանական հակամարտ գործերի շփման գծի հարավարևելյան և հյուսիսարևելյան ուղղությամբ ընթանում են թե՛ մարտեր: Լուսաղեմին հակառակորդի կողմից ձեռնարկված լայնածավալ հրետակոծությանն ի պատասխան, ՊԲ ստորաբաժանումները անցել են հակազդիչ գործողությունների և Թալիշի ուղղությամբ տիրել նախօրյակին ադրբեջանական ուժերի կողմից գրավված մարտավարական կարևոր նշանակության հենակետին: Թշնամին զգալի կորուստներ կրելով հետ է շարժվել:

Մարտական գործողությունների ժամանակ զարաբաղյան կողմից վիրավորվել է երկու զինծառայող:

Ղարաբաղյան ուժերի գործողությունները հաջող են ընթանում նաև մարտագծի հարավային հատվածում: Այս ուղղությամբ դիմագրավելով հակառակորդի հրթիռահրետանային ու զրահատանկային հարձակումներին, հարավային թեւում գործող ՊԲ ստորաբաժանումները շարքից հանել են թշնամական 2 տանկ և 1 հետեւակի մարտական մեքենա (ՀՍՍ):

■ (03/04/16 [13:55])  
 Ղարաբաղ-ադրբեջանական հակամարտ գործերի շփման գծի ողջ երկայնքով իրավիճակը տակավին մնում է լարված: Առավել ուժգին բախումներ են տեղի ունենում մարտագծի հյուսիսարևելյան և հարավարևելյան ուղղություններում: ՊԲ ստորաբաժանումները Թալիշի ուղղությամբ հակառակորդին հասցնում են կենդանի ուժի և զինտեխնիկայի մեծ կորուստներ: Հաստատված տվյալներով այս հատվածում ադրբեջանական զինուժը կորցրել է 3 տանկ: Հիշեցնենք, որ ես 2 տանկ և 1 ՀՍՍ հակառակորդն այսօր կորցրել է հարավարևելյան ուղղությամբ:

Մարտագծի հարավարևելյան ուղղությամբ ես ընթանում են դիրքային թե՛ մարտեր:

Հակամարտ գործերի շփման գծում հակառակորդն իր անգործությունը փորձում է պարտակել խաղաղ բնակիչների, մասնավորապես Մարտակերտ քաղաքի վրա ՄՄ-21 («Գրադ») հրթիռահրետանային կայանքից և 152 միլիմետրանոց հրետանային միջոցներից իրականացվող արկակոծումներով:

■ (03/04/16 [16:25])  
**ԼՐՀ ՊՆ հայտարարությունը**  
 Ադրբեջանի պաշտպանության նախարարության կողմից տարածված՝ մարտական գործողությունների միակողմանի դադարեցնելու մասին հայտարարությունն ապատեղեկատվություն է:

Ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը ադրբեջանական կողմը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ սկսել է լայնածավալ հարձակողական գործողություններ, կիրառել է իր զինանոցում եղած ռազմական տեխնիկայի գրեթե բոլոր հնարավոր տեսակները, ավելին՝ նույն հայտարարության տարածումից հետո ՄՄ-21 («Գրադ») տիպի հրթիռահրետանային կայանքներից և 152 միլիմետրանոց հրանոթներից արկակոծել հայկական խաղաղ բնակավայրերը, մասնավորապես՝ Մարտակերտ քաղաքը:

Նշված փաստերն, ինչպես նաև հայտարարության մեջ «հակահարձակողական գործողություններ» և «ազատագրված տարածքների ամրապնդում» եզրույթները օգտագործումը ի ցույց են դնում այդ փաստաթղթի կեղծ բնույթը, որի իրական նպատակը բացահայտ նախապայմաններով լի կրակի դադարեցման իմիտացիան է:

ԼՐՀ Պաշտպանության բանակը պատրաստ է ընդառաջել և քննարկել կրակի դադարեցման մասին առաջարկը՝ նախնական դիրքերի վերականգնման համատեքստում:



■ (03/04/16 [19:50])  
 Ղարաբաղ-ադրբեջանական հակամարտ գործերի շփման գծում մարտերը շարունակվում են:

Ծավալված մարտական գործողությունների ընթացքում պաշտպանության բանակի կողմից հյուսիսարևելյան ուղղությամբ ոչնչացվել է ես 1 տանկ, հյուսիսային ուղղությամբ՝ ՄՄ-21 («Գրադ») տիպի 1 հրթիռահրետանային կայանք, 1 միավոր ինժեներական տեխնիկա և 1 միավոր անօդաչու թռչող սարք՝ Մարտակերտի ուղղությամբ:

■ (04/04/16 [08:10])  
 Ապրիլի 3-ի լույս 4-ի գիշերը զարաբաղ-ադրբեջանական հակամարտ գործերի շփման գծի ողջ երկայնքով հակառակորդը ակնհայտորեն ու հրանոթներից շարունակել է արկակոծել ՊԲ առաջնային դիրքերն ու մերձակա հայկական բնակավայրերը: Առավոտյան ժամը 07:00-ի սահմաններում առավել ինտենսիվ հրետակոծություններ են սկսվել շփման գոտու հարավարևելյան և հյուսիսարևելյան ուղղություններով: Ադրբեջանական բանակը կիրառում է 152 միլիմետրանոց հրանոթներ, «Գրադ» կայանքներ և տանկեր: Հակառակորդի ագրեսիվ գործողությունները ճնշելու ուղղությամբ ՊԲ առաջապահ ուժերը ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները և վստահաբար իրականացնում իրենց առջեւ դրված մարտական խնդիրները:

■ (04/04/16 [10:45])  
 Ղարաբաղ-ադրբեջանական հակամարտ գործերի շփման գծի ողջ երկայնքով ընթանում են թե՛ մարտեր: Ղարաբաղյան ուժերը հակառակորդին պատճառելով զգալի կենդանի ուժի և զինտեխնիկայի կորուստներ՝ մարտագծի հյուսիսարևելյան և հարավարևելյան ուղղություններով նախաձեռնությունը վերցրել են իրենց ձեռքը: Ռազմական գործողությունների ընթացքում հակառակորդը հյուսիսարևելյան ուղղությամբ կորցրել է 3 տանկ, իսկ հարավարևելյան ուղղությամբ՝ 2 տանկ:

■ (04/04/16 [13:30])  
 Ղարաբաղ-ադրբեջանական հակամարտ գործերի շփման գծի ողջ երկայնքով շարունակվում են ընթանալ թե՛ բախումներ: Հակառակորդը մարդկային և

զինտեխնիկայի մեծ կորուստներից սարսափած, այսօր՝ ժամը 11:20-ի սահմաններում հյուսիսարևելյան ուղղությամբ առաջին անգամ կիրառել է ԾՕՍ (Тяжелая огнемётная система) ծանր հրանետային համակարգեր: Նշված զինատեսակի կիրառումից զարաբաղյան կողմը կորուստ չունի: Նույն ուղղությամբ հակառակորդը օգտագործել է երկու հարվածային անօդաչու թռչող սարք, իսկ 1-ը՝ հարավարևելյան ուղղությամբ, որոնց գործողությունները նպատակին չեն հասել: Բոլոր 3 հարվածային անօդաչու թռչող սարքերը ոչնչացված են:

■ (04/04/16 [21:40])  
 Ղարաբաղ-ադրբեջանական հակամարտ գործերի շփման գծում շարունակվում են մարտական գործողությունները: Օրվա ընթացքում հակառակորդը, բացի նախօրեին գործածության մեջ դրած զինատեսակներից, սկսել է կիրառել նաև սեփական զինանոցում կուտակված «ԾՕՍ 1» տիպի ծանր հրանետային համակարգեր, հարվածային անօդաչու թռչող սարքեր ու այլ ժամանակակից զինտեխնիկա: Սակայն այս ամենի արդյունքում անգամ ադրբեջանական զինուժին չհաջողվեց ռազմաճակատում փոխել դեպքերի զարգացման ընթացքը հոգուտ իրեն: Հակառակը, ՊԲ բոլոր ուղղությունների ստորաբաժանումները ոչ միայն հաջողությամբ իրենց դրսևորեցին դիրքային մարտերում, այլև գրագետ ու նպատակասլաց գործողությունների շնորհիվ օրվա ընթացքում ոչնչացրին թշնամական 5 տանկ, 3 հարվածային անօդաչու թռչող սարք, տարբեր տեսակի տեխնիկա և տասնյակների հասնող կենդանի ուժ:

Գուցե հենց մեր այս հաջողությամբ է պայմանավորված Ադրբեջանի ռազմական ղեկավարության կողմից արված անհավասարակշիռ հայտարարությունը, ըստ որի նրանք հանդես են գալիս Արցախի Հանրապետության խաղաղ բնակավայրերի և մասնավորապես մայրաքաղաք Ստեփանակերտի շրջափակումն սպառնալիքներով:

ԼՐՀ պաշտպանության նախարարությունը զգուշացնում է անձամբ Հասանովին և նրա «գերագույնին», որ նման զարգացումների դեպքում արձագանքը լինելու է անհամաչափ և ավելի ցավոտ:



ԵՅ ԻՍՅ ՔՅ ԻՅ ԻՅՍ...



